ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2019թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-095-08.04.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մայիսի 3 -ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 487 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-095-08.04.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱ-ՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 258[2]-րդ հոդվածով, ինչի արդյունքում կքրեականացվի կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը:

Ընդհանուր առմամբ ընդունելի ենք համարում նախագծերով առաջարկվող մոտեցումը, սակայն գտնում ենք, որ ներկայացված նախագծերով տրվում է իրավիճակային կարգավորում: Հարցը համալիր ձևով կարգավորելու նպատակով ներկայումս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների հետ համատեղ քննարկվում է համապատասխան օրենքի նախագիծ, որում ամբողջական ձևով կարգավորվելու են կենդանիների պահելու հետ կապված բոլոր հարաբերությունները և այդ առումով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում և Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծերը կհանդիսանան նշված օրենքների նախագծերի փաթեթի անբաժանելի մասը: Ելնելով վերոհիշյալից՝ առաջարկում ենք ձեռնպահ մնալ ներկայացված օրենքների նախագծերի ընդունումից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մայիսի 2019 թվականի N 487 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Աննա Վարդապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-095-08.04.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մայիսի 3
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 258.[2] հոդվածով.

«**Հոդված 258.[2] Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը**

Կենդանիների նկատմամբ այնպիսի դաժան վերաբերմունքը, որը զուգորդվել է խուլիգանական դրսևորումներով և հանգեցրել է դրանց ոչնչացմանը կամ խեղմանը՝ պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:»:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առկա վիճակը և խնդիրները

ՀՀ-ում կենդանիների խեղման, ոչնչացման, խոշտանգման դեպքերը բազմաթիվ են, և նման դեպքերի համար ՀՀ քրեական օրենսգրքում ազտազրկումը, որպես պատիժ չի նախատեսվում: Նման երևույթները, արարքները, հատկապես ԶԼՄ-ներում կամ համացանցում ցուցադրելը կամ տարածելը մեծ թվով մարդկանց պատճառում է խոր հոգեբանական վնաս՝ առաջացնելով հասարակության զայրույթը:

Ստորև ներկայացվում է 2018թ. հոկտեմբերից 2019թ. մարտ ամիսներին հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված վիճակագրությունը՝

- շներին մեքենայից կապելու և կենդանի-կենդանի քարշ տալու 2 դեպք,
- նույն տարածքում տարբեր կատուների ձախ աչքը հանելու 4 դեպք,
- ոչ սպանելու նպատակով՝ օրինակ 4 թաթերին կրակելու, 12 դեպք,
- սպանելու նպատակով կրակելու և կիսասատկած փողոցում թողնելու 28 դեպք,
- մեկ ամսական ձագուկ կրակելու և աղբամանի մոտ գցած թողնելու 5 դեպք,
- շնամարտի արդյունքում պարտված շանը կրակելու 4 դեպք:

Գործող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի կարգավորումներով նշված դաժան արարքների վերաբերյալ նախատեսվում է տուգանք, որը բավարար չէ, որպեսզի կանխվի նման դեպքերը: Նախագծով առաջարկվում է գործող Վարչական իրավախախտումների վերբերյալ ՀՀ օրենսգրքի 92-րդ հոդվածը՝ ճանաչել ուժը կորցրած և այն կարգավորել ՀՀ քրեական օրենսգրքով: Հատկանշական է, որ նախագծում ներկայացված արարքը, մինչև 2003թ. կարգավորվել է նաև ՀՀ

է, որ նախագծում ներկայացված արարքը, մինչև 2003թ. կարգավորվել է նաև ՀՀ Քրեական օրենսգրքով: ՀՀ Քրեական օրենսգրքի խնդիրներից է՝ հանցավոր ոտնձգություններից պաշտպանել հասրակական կարգը և բարոյականությունը:
Կենդանիների նկատմամբ դաժանությունը պետք է արգելվի և պատժվի, քանի որ այն հանգեցնում է հասարակության շրջանում բռնության և ագրեսիվության աճի:
Սույն իրավակարգավորման առնչությամբ հաշվի են առնվել նաև միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները, մասնավորապես՝ ուշադրության են արժանացել Ռուսաստանի, Բելառուսի, Ուկրաինայի և Վրաստանի Քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածները, որոնցով ևս քրեական պատասխանատվություն է սահմանվում կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու դեպքում:
Պրակտիկան ցույց է տալիս, որ վերոնշյալ գործողությունները կենդանիների նկատմամբ իրականացվում է ինչպես թաքնված այնպես էլ բացահայտ, նման դաժան վերաբերմունքն ինքնին քրեածին գործոն է, որը կարող է հանցագործություն կատարող անձի կողմից՝ հետագայում բռնության կիրառման պատճառ հանդիսանալ:

Ակնկալվող արդյունքը

Առաջարկվող կարգավորմամբ հնարավորություն կստեղծվի պաշտպանել կենդանիներին խոշտանգումներից, դաժան վերաբերմունքից և հնարավորինս կկանխվի կենդանիների հանդեպ նման գործողություններ կատարելը, ինչպես նաև մեծ թվով մարդկանց, առավել ևս անչափահասներին՝ վերոնշված գործողությունների հետևանքով պատճառվող խորը հոգեբանական վնասը կանխելու հնարավորություն կստեղծվի: